

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե **11-12-րդ դասարաններ**

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Անմեղ մեղավոր, քաղցր տանջանք, երիտասարդ ծերություն, պարտված հաղթություն: Իսկ ո՞րը կլինի լուրջություն բառի հատկանիշը:

- Ա. անձայն Բ. խոտուն Գ. համր Դ. քար Ե. անշշուկ

2. Խոր աշնանը Ե. Չարենցը ձեռնամուխ եղավ «_____» խմբակցության ստեղծմանը:

- Ա. Սեպտեմբեր Բ. Մայիս Գ. Հունվար Դ. Հունիս Ե. Նոյեմբեր

3. Ո՞ր նկարներն են սխալ բացատրված:

1.  - բավիղ	2.  - փարավոն	3.  - անջատիչ
4.  - աշտանակ	5.  - ջոկ	
Ա. 1, 5 Բ. 3, 4 Գ. 2, 4 Դ. 3, 5 Ե. 3, 4, 5		

4. Եթե մանուշակագույնը զրկենք երանգից, անվից ու քաղցր մասից, ապա շրջենք, ի՞նչ կստանանք:

- Ա. տարի Բ. ծաղիկ Գ. նկար Դ. փոշի Ե. ամիս

5. Կոկորդիլոսի արցունք թափել դարձվածքը նշանակում է՝

- Ա. խոշոր կաթիլներով արցունք թափել Բ. մանր կաթիլներով արցունք թափել
 Գ. կեղծ արտասվել Դ. անկեղծ արտասվել
 Ե. սրտանց արտասվել

6. Բառերից քանիստ՞ում է քար-ն ապար:

կայծքար, պայքար, քարոզ, քարտեզ, քարատակ, քարտուղար, քարք, քարհանք, քարայր, քանքար

- Ա. 1 Բ. 2 Գ. 3 Դ. 4 Ե. 5

7. Ամբողջացրու ժողովրդական առածը. «Յոթ վարդապետ մի աղջիկ կնքեցին, անունը դրեցին _____»:

- Ա. Օովինար Բ. Վարդիշաղ Գ. Մարիամ Դ. Կիրակոս Ե. Անանուն

8. Քանի՞ տառանի է նկարելուկով գաղտնագրված բառը:



- Ա. երկտառանի Բ. յոթտառանի Գ. չորստառանի
 Դ. վեցտառանի Ե. հինգտառանի

9. Տարբերակներից որո՞ւմ է թաքնվել **ալ** տառը:


- Ա. ընչագուրկ Բ. ընչացք Գ. ոչնչանալ Դ. ընչաքաղց Ե. ընչասեր

10. Եթե բառերը բաժանվեն բանակների, ապա ո՞ր բառագույգերի բառերը կհայտնվեն հակառակ բանակներում:

1. բերկրալից - թախձոտ, 2. հրապուրել - թովել, 3. հրաշալի - սքանչելի,
 4. փուլթկոտ - դանդաղկոտ, 5. մաքուր - հստակ
 Ա. 1, 3 Բ. 1, 4 Գ. 2, 5 Դ. 3, 4 Ե. 3, 5

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րը տեղադրելով մեղվի փոխարեն՝ հնարավոր է կարդալ 7-տառանի մի բառ: Բառը կարելի է կարդալ՝ շարժվելով միայն վերևից ներքև և ձախից աջ ուղղություններով:

Պ	Ա	Ն	Ի	Ը
Կ	Տ	ՈՒ	Ը	Ի
Ա	Կ		Ս	Ս
Պ	Ե	Ա	Խ	Ո
Տ	Ը	Ն	Ա	Գ

- Ա. կ Բ. գ Գ. ր Դ. հ Ե. տ

12. Գիտունիկը գրատախտակին սխալ գրված չորս բառը շնջեց: Ո՞րը մնաց:

- Ա. հագցրի Բ. սառցրի Գ. օրեկան Դ. ամսեկան Ե. հարցրեցի

13. Որտե՞ղ մակարոյծ բառեր չկան:

- Ա. Հեռուստատեսությունը դա այն կայան է, որ առաջանում է մարդկանց միջև:
 Բ. Շինարարները նորոգեցին գյուղ տանող ճանապարհը:
 Գ. Շորերս կրկին անգամ արդուկեցի:
 Դ. Մի շիկահեր մագերով աղջիկ մոտեցավ մեզ:
 Ե. Խոսքը գնում է գրքերի մասին:

14. Բորբ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին Ու վերևից խնայց գվարթ ու ոսկեձայն.

Հագար վարդեր կրակվեցին շուրջը, կողքին, Հագա ի խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան:

Ո՞ր բառն իր հումանիշը չունի բերված քառատողում:

- Ա. կակաչ Բ. հրալեզու Գ. ջերմ Դ. ցնծուն Ե. խաշամ

15. Ասում են՝ նունուֆար ծաղիկը բուսնել է այն հերոսի արյան կաթիլներից, որը Մեդրագետում լողանալիս սպանվել է Չմշկիկ Սուլթանի դարանակալ աղջկա կողմից: Ո՞ր հերոսի մասին է խոսքը:

- Ա. Մեծ Մեերի Բ. Մասունցի Դավթի Գ. Փոքր Մեերի
 Դ. Արտավազի Ե. Տիգրան Մեծի

16. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

ԳԻՐՔ
+
ԳԻՐՔ
ՆԱՏՈՐ

Ա. 6342	Բ. 7342	Գ. 5342	Դ. 8342	Ե. 9342
+	+	+	+	+
<u>6342</u>	<u>7342</u>	<u>5342</u>	<u>8342</u>	<u>9342</u>
12684	14684	10684	16684	18684

17. «Էջը ցեխն ընկավ, տիրոջից ուժովը չկար, որ հանի» առածը նշանակում է՝

- Ա.** էջը այնպես պիտի քշես, որ ցեխը չընկնի
- Բ.** մարդ պիտի իր ուժերին ապավինի. սեփական գործերում ամենաշահագրգռվածը էլի ինքն է
- Գ.** ամենամոծեղ տիրոջ էջն էլ մի օր ցեխը կընկնի, հանել է պետք
- Դ.** որևէ բան անելուց առաջ մտածի՛ր. հնարավոր է՝ չկարողանաս անել. հարկավոր է խորհրդակցել ընկերների հետ
- Ե.** եթե դու իմ էջը ցեխից չհանես, ես էլ քո էջը չեմ հանի

18. Երբ որ տեսնում ես՝

- Նրան չես տեսնում:
- Երբ որ չես տեսնում՝
- Տեսնում ես նրան: (*ժողովրդական հանելուկ*)

Ա. երազ **Բ.** ակնոց **Գ.** մուր **Դ.** հայելի **Ե.** սովեր

19. Պատասխանի ո՞ր տարբերակի միջոցով **քնկոտն** իր սիրած գործողությունը կձևակերպի:

Ա. մենք **Բ.** դուք **Գ.** նրանք **Դ.** իրենցից **Ե.** մեզմով

20. **Գավազան** բառում, առանց տառերի դասավորությունը փոխելու, իրար հաջորդող տառերով քանի՞ նոր գոյական կարելի է կարդալ:

Ա. 4 **Բ.** 5 **Գ.** 6 **Դ.** 7 **Ե.** 8

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Հայկուհին ունի տասը խորանարդիկ, որոնցից յուրաքանչյուրի բոլոր նիստերի վրա գրված է մեկական տառ. այդ տառերն են՝ **ա, ե, պ, ք, կ, ի, կ, ն, ա, ն:** Հայկուհին քանի՞ խորանարդիկ պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

Ա. 10 **Բ.** 9 **Գ.** 7 **Դ.** 5 **Ե.** 4

22. Ո՞ր տարբերակի տառերը ճիշտ վերադասավորելու դեպքում կստանանք Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններից մեկի վերնագիրը:

Ա. տասնավերիհայք **Բ.** վաղնիվածանսապ **Գ.** հավատարիմպ
Դ. հակումեռարեց **Ե.** ջազայիներգոջ

23. Ընդգծված բառերից ո՞րն է մյուսներից տարբեր:

- Ա.** Թող խնամի, հետո կտաս: **Բ.** Թո՛ղ, խնամի՛, հետո կտաս:
- Գ.** Երբ խնամի, նվերը կտաս: **Դ.** Նա խնամի, պարզև կտաս:
- Ե.** Եթե պապը այգին լավ խնամի, բերք կստանա:

24. Տրված բառերից մեկն ունի միայն մեկ գրաշրջում (նույն տառերից կազմված բառ), չորսը՝ երկուական: Ո՞րն է մեկ գրաշրջում ունեցող բառը:

Ա. կթան **Բ.** վազելին **Գ.** դատաքննություն **Դ.** մկրատ **Ե.** պաս

25. Նկարելուկով գաղտնագրված է մի նախադասություն: Օգտագործելով **վրա** և **տակ** կապերը՝ վերծանե՛ք այն: Տրված նախադասություններից ո՞րն է նկարելուկի ճիշտ պատասխանը:

ՈՒՄ Մ ՄՈՍ
ՄԻ ԱՌ ԿԱՐ

- Ա.** Մի մատուռում մոմ կար: **Բ.** Մի վրանում մի տակառի վրա մոմ կար:
- Գ.** Մի վրանում մի տակառ կար, վրան՝ մոմ: **Դ.** Ո՛ւմ վրանում է մոմ վատվում:
- Ե.** Ո՛ւմ տակառն է մատուռի դռանը, վրան՝ մոմ:

26. Տրված բառերից չորսը կապված են ընդհանուր օրինաչափությամբ: Ո՞ր բառն այդ օրինաչափությանը չի համապատասխանում:

Ա. այգաբաց **Բ.** այծքաղ **Գ.** ծնկաչոք **Դ.** քաջարի **Ե.** նմանապես

27. Ո՞ր բառի տառերի թվային արժեքների գումարն է ամենամեծը:

Ա. կառք **Բ.** քրոմ **Գ.** սուրճ **Դ.** քուրմ **Ե.** փառք

28. Բերված բառագույգերից չորսին հատուկ է շատ հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառագույզն այդ օրինաչափությանը չի ենթարկվում:

Ա. շաղ - տող **Բ.** սուր - դեր **Գ.** բառ - սեր **Դ.** նուշ - թիզ **Ե.** տուն - թագ

29. **ՎԱԶՈՂ, ՔԱՅԼՈՂ, ՆՍՏՈՂ, ՊԱՌԿՈՂ, ՇՐՋՈՂ** բառերից մեկն առանձնանում է մի շատ զարմանալի յուրօրինակությամբ՝ այլ անկյունից նայելու դեպքում: Ո՞րն է այդ բառը:

Ա. ՔԱՅԼՈՂ **Բ.** ՆՍՏՈՂ **Գ.** ՎԱԶՈՂ **Դ.** ՊԱՌԿՈՂ **Ե.** ՇՐՋՈՂ

30. **Լերկ ուռենի, տոչոր սիրտ, հին գաղտնիք, կավե ցանկապատ, հատու թուր** բառակապակցությունները մի ընդհանուր հետաքրքիր հատկությամբ նման են իրար: Սակայն բառակապակցություններից մեկը սխալմամբ է հայտնվել շարքում: Ո՞ր բառակապակցությունն է դա:

Ա. Լերկ ուռենի **Բ.** տոչոր սիրտ **Գ.** հին գաղտնիք
Դ. կավե ցանկապատ **Ե.** հատու թուր